

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Կր. 4. Ռեկլամի.

## Դ.

## Հ ա գ ու ս տ ր .

Հագուստը կրկնակի նշանակութիւն ունի. առաջին, պաշտպանում է մեզ վատ եղանակի և կլիմայի ազդեցութիւնից, և երկրորդ, պահասեցնում է մեր մարմնի ջերմութեան կորուստը:

Միայն յիմարներն են հետևում այնպիսի մոզայի, որ հագուստի յատկութեան, ձևի և գոյնի կողմից չէ համապատասխանում այդ սրահանջներին:

Հագուստը պաշտպանում է մեզ տօթից, ցրտից, անձրևից ու քամուց, ուստի և մեր մարմնի համար ծառայում է որպէս մի երկրորդ կաշի, որ սակայն զուրկ է զգայութիւնից: Որքան լաւ է փաթաթում հագուստը մեր մարմինը, այնքան աւելի օգտակար է ու առողջարար. բայց երբ հագուստը չափից դուրս կիպ կպած է լինում մարմնին, քիչ օգուտ է բերում, որովհետև այն ժամանակ զգում ենք օդի բարեխառնութեան փոփոխութիւններն ու խոնավութիւնը:

Բացի սորանից հագուստը, ամէն կողմից մեր մարմինը պատելով, պաշտպանում է մեզ չափից դուրս շատ սառչելուց, որ յառաջ է գալիս մարմնի ջրային մասերի գոլորշիանալուց, քրտնելուց. սորա պատճառն այն է, որ հագուստի ու կաշու արանքում քիչ թէ շատ տաքացած օդի մի շերտ է դոյանում, որ թէ ինքը դուրս չէ գնում և թէ դրսի օդը ներս չէ թողնում. այս հանգամանքը շատ լաւ պաշտպանում է մեզ աւելորդ ջերմութիւն կորցնելուց: Այս պատճառով արարները գործ են ածում հաստ, սպիտակ ծածկոցներ, որ պաշտպանում են մարմինը դրսի օդի հետ շփուելուց և կլանում են արևի ճառագայթները, իսկ հեռաւոր հիւսիսում հագնում են փափուկ բրդէ կտորից կամ կենդանիների մորթուց կարած զգեստներ:

Որովհետև սպիտակ գոյնը միւսներից պակաս է արտադրում ու կլանում ջերմութեան ճառագայթները, իսկ սևն, ընդհակառակը, միւսներից աւելի, ուստի ընականաբար թէ ամառ թէ ձմեռ պէտք է գերադասել բաց գոյնի զգեստներ:



Բայց հազուստը կարող է և վնաս բերել մեզ մի քանի դէպքերում: Այդ այն ժամանակն է լինում, երբ հազուստը խիստ սեղմում է մարմինը և արդելք է լինում կանոնաւոր արենագարծութեան, կամ դժուարացնում է որ և գործարանի պաշտօնակատարութիւնը: Մինչև 1830 թուականը այդպիսի դէպքեր շատ էին պատահում աղամարդկանց մէջ, որոնք այնպիսի բարձր ու կոշտ փողպատներ էին գործ ածում, որ արդելք էին լինում արեան գլխից յետ գնալուն և կաթուածահարութեան պատճառ էին դառնում. իսկ կանայք յիմարաբար ամուր սեղմում էին կորսետով իրենց իրանը: Բարեբաղդաբար այդ մօզան այժմ հեաղհեաէ վերանում է, և միայն տխմարներն են, որ բարակ մէջք ունենալու համար յօժարակամ դատապարտում են իրենց արեան պակասութիւն ու գլխի պտոյտներ ունենալու և արագացնում են իրենց վախճանը: Բացի սորանից թէ աղամարդկանց և թէ կանանց մէջ պատահում են այնպիսիները, որ քիչ է մնում իրենց սաների սոխըները փշրեն, այնքան նեղ կօշիկներ են գործ ածում:

Ի՞նչ անես որ յիմարներին խելք սովորեցնելը դժուար բան է. նորա միայն այն ժամանակ են հասկանում իրենց անձին հատած վնասը, երբ արդէն առողջութիւններն են կորցնում:

Հազուստն ազգում է մեր առողջութեան վերայ և այն մաքրութեան շնորհիւ, որ կարելի է լինում պահել սպիտակեղէն բանացներով: Գեռ հարիւլ տարի հազիւ լինի, որ ամէն տեղ սովորութիւն է դարձել սպիտակեղէն գործ ածելը. այժմ էլ դեռ շատ մարդիկ կան, որ առանց շապկի ու շապկաբնկերի են կառավարուում: Սակայն սպիտակեղէնը ծծում, իւր մէջ է քաշում մեր քրտինքը, կլանում է փոշին և ուրիշ կեղտեր, այնպէս որ սպիտակեղէնը լուանալով մենք կարծես մեր մարմինն ենք լուանում:

Սպանիայում գերմանացի բանուորներն անմաքրատէր են համարում, որովհետև ամէն օր չեն կարողանում իրենց շապկը փոխել: Մարմնի մաքրութեան և կանոնաւոր առողջապահութեան տեսակէտից այդ էլ քիչ է. պէտք է գիշերները մի շապկով քնել, իսկ առաւօտները ուրիշ շապկի հագնել, որ գերծ լինի քրտնքի և առհասարակ մարմնի խոնաւութեան ազդեցութիւնից: Գիշերուայ շապկին էլ չի կարելի փաթաթել դնել բարձի տակ, այլ պէտք է փռել բաց օդում: Յերեկուայ շապկը շաբաթն ամենաքիչն երկու անգամ պէտք է փոխել:

Հազուստն օգտակար լինելու համար՝ տարուան եղանակներն համեմատ պիտի թեթեւ լինի կամ տաք: Բայց այս խնդրումն



էլ նշանակութիւն ունի մարդու սովորութիւնը և կաշու տոկունութիւնը. ով որ բոլորովին առողջ է և շատ ժամանակ է անցկացնում բաց օդում, նա աւելի քիչ կը վնասուի ցրտից կամ տօթից, ուրեմն և կարող է տաք կամ թեթև շոր հագնել, ինչպէս կամենայ, իսկ հիւանդոտ մարդիկ, որոնք շատ են տանը նստում, պէտք է զգոյշ պահեն իրենց՝ ցրտից ու վատ եղանակից չվնասուելու համար, Միևնոյնը կարելի է ասել երեխաների համար. սոցա հագուստը փափուկ կտորից պիտի կարուի, որ արդէլք չլինի արենադարձութեանն ու երեխաների ազատ շարժումներին:

Հագուստը նաև լաւ դաստիարակչական միջոց է: Երեխաներին պէտք է սովորեցնել որ իրենց շորերը մաքուր, կարգին պահեն, երեկոները միշտ որոշ տեղում փռեն, լաւ շորերը պահպանեն, չկեղտոտացնեն, չպատռտեն: Ամէն երեխայ պիտի վարժուի ու սովորութիւն դարձնէ, որ ինքը իւր շորերը մաքրէ, որով նա ճշտապահութեանն ու ուշադիր լինելու է ընտելանում, այլ և սովորում է կառավարուել առանց ուրիշի օգնութեան. մեծերն էլ աւելորդ հոգսից ու ժամանակի կորուստից ազատ են մնում:

Այսու ամենայնիւ ով որ չափազանց շատ է հող տանում հագուստի գեղեցկութեան մասին, նա ուրեմն բարձր է դասում այն իւր արժանապատուութիւնից, ուրեմն և քիչ դին է տալիս իրեն:



### ՀՈՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ.

Հողագիտութիւնը ուսուցանում է մշակելի հողերի կազմութիւնը, տեսակները, ֆիզիքական և քիմիական յատկութիւնները, ինչպէս նաև մշակուելիք բոյսերի հետ ունեցած յարաբերութիւնները:

Հող կամ գետին կոչւում է երկրիս երեսը գտնւող այն մասը, որն մէջ բոյսերի արմատները հաստատուելով դարդանում են և բոյսերը կանգուն պահում օդի մէջ: Հողի բաղադրիչ նիւթերը կամ տարրերը առաջացել են հանքային, բուսական և կենդանական մարմինների քայքայումից կամ տարրալուծումից: